

**ՀՈՒՓՄԻՄԵ ԱՐԱՅԻ
ՉԱՔԱՐՅԱՆ**

**Երևանի պետական համալսարանի
հայ նորագույն գրականության
ամբիոնի հայցորդ**
E-mail: zaqaryan_hripsime@mail.ru

**ԽՈՍՔԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱԾԽԱՐՀՈՒՄ**

Պ ուղիան իր տաղաչափությամբ, քնարով, իր բազմերանգ ելևէջումներով ու նրբերանգներով դարեր ի վեր նպաստել է երաժշտական մտքի զարգացմանը, դարձել երաժշտաստեղծների ոգեշնչման աղբյուրը: Հենրիկ Էդոյանի խոսքի երաժշտությունը ժամանակին գերել է իր սերընդակցին՝ կոմպոզիտոր Մարտուն Իսրայելյանին: 1980 թ. Մ. Իսրայելյանը ձայնի (սուպրանո) և կամերային նվագախմբի համար Հենրիկ Էդոյանի երեք սոնետների («Մարգագետին», «Ջևաի կարապը», «Ապոլոն») հիման վրա, ոգեշնչված ստեղծել է երաժշտարվեստի ինքնատիպ գործ՝ «Սոնետների տետր»՝ (9.) միաձուլելով սեփական երաժշտական լեզուն բանաստեղծի խոսքի երաժշտությանը՝ բարձրացնելով այն հոգեբանական այնպիսի ոլորտ, որտեղ իշխում է հույզը: Տարիներ անց բանաստեղծի «Դու՝ ինչ-որ մեկը» բանաստեղծությունն արժանացել է Բարդի Մինասյանի ուշադրությանը, ով ներշնչված գրել է երաժշտություն՝ ձայնի (սուպրանո), հայկական վիոլայի, դաշնամուրի և սամուրնդի համար, որն ասես երաժշտության և խոսքի ներդաշնակ, հոգեցունց միաձուլման օրինակ լինի (10.):

Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհն առանձնանում է իմաստային բազմաշերտությամբ: Այդ աշխարհի հետ ծանոթությունը մտքի մեծ ջանք է պահանջում, քանի որ աննկարագրելիությունը, անսահմանությունն Էդոյանի համար ստեղծագործելու սկզբունք է: Անցում կատարելով բանաստեղծի խոսքային պատկերից այն կողմ, ներթափանցելով նրա բանաստեղծական տիեզերքի անսահմանություն, բացահայտվում է բանաստեղծ-մտածողի զարմանահրաշ աշխարհաճանաչողության բացառիկությունը, որը ծավալվում է տիեզերակենտրոն աշխարհընկալման հորիզոնում, որի բնույթը պայմանավորված է խոսքի հնչյունային ինտոնացիան երաժշտությունն ընկալելու պոետական դիրքորոշմամբ: Էդոյանական խոսքը, որը վերացական է, միևնույն ժամանակ նաև իրեղեն, իր մեջ ամփոփելով և իմաստավորելով համամարդկային փորձը, ենթադրում

է մտածողության նոր ձևեր: Էդոյանի բանաստեղծական խոսքում մարդը ներկայացված է իր կենսաիմաստային և տիեզերական կողմնորոշումներով: Յուրօրինակ խոսքային արժեքներով է արտահայտվում նրա վերաբերմունքը մարդու և համամարդկային բարոյական ու նյութական արժեքների դրսևորման հանդեպ. «...բանաստեղծը, բառի «կենսագրության» մեջ թաքցնելով իր եսը, ընկալում է բառն իբրև կոնստրուկցիա, ինքն էլ վերածելով կոնստրուկցիայի՝ ձուլելով բանաստեղծին իրականությանը և փաստին, որ նույնն է, ինչ Էդոյանն անվանում է «պոետական վիճակ», այնուհետև՝ բառի/պատկերի իմաստը, անցման և փոխակերպման, ներքին շարժման ընթացքով վերածում է մետաֆորի, որ խոսքի ոլորտն է» (1. էջ 122):

Հենրիկ Էդոյանին հաջողվեց արտահայտել իրենը՝ զուտ էդոյանականը, որը վերերկրայինի յուրահատուկ ընկալումն է հնչյունի, խոսքի և իմաստի երրորդության բանաստեղծական բանաձևում: Նրան տրված է ներթափանցել ռիթմերի, հնչյունների և նրանցից արձակվող էներգիաների և իմաստների՝ որպես իրարից անտրոհելի մասնիկների մեջ, խոսքի լուծությունն ու նրա էներգիկնաֆորմացիան ընկալելու շնորհը, որոնք արտացոլվում են նրա բանաստեղծություններում: Էդոյանը, խոսքի ինտոնացիոն-իմաստային բնույթին ունկնդիր, նրանց մեջ բացահայտել է բացառիկ հնարավորություններ, հաստատելով նրանց տարերքն իր բանաստեղծական շարքերում և բանաստեղծական էներգիայում: Էդոյանական խոսքում մշտապես ամփոփված է բառի ետևում թաքնված իմաստային բովանդակության բացահայտման հնարավորությունը: Բառերում, ձայների և հնչյունների ներդաշնակությունը բանաստեղծի գիտակցության մեջ առաջացնում է տիեզերական ուժեր, որոնք կառավարում են նրան: Կառավարվելով այդ ուժերի կողմից, Էդոյանը գիտակցում է, որ այլևս դատապարտված է բանաստեղծության, քանզի նրա համար խոսքը կյանքի էությունն է, նրա ալֆան և օմեգան: Ձայնի, խոսքի և իմաստի միասնությունը առաջացնում

ԵՊԿ «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Օլյա Յուրիի Նուրիջանյանի և ԵՊՀ Հայ նորագույն գրականության ամբիոնի՝ 25.03.2019 թ. ընդունվել է տպագրության՝ 30.05.2019 թ. ներկայացրել է հեղինակը՝ 27.04.2019 թ.

Պոեզիա - Երաժշտություն

է մտքի խաղ և ծնվում է պոեզիա, որը.

...փողոցը չէ,
այլ փողոցով անցնող
մարդը միայնակ,
ձեռքերը գրպաններում...

(«Այլ լռությունը բառերի միջև») (3. էջ 378):

Բանաստեղծի պատկերմամբ պոեզիան ծառի ճյուղերում ապրող թռչուն է, դեմքի վրայով սահող ստվերը, ամպը երկնքում, այն ոչ թե արտաբերված բառն է, այլ բառերի միջև եղած լռությունը, փողոցով անցնող երկու պատահական անձանցների միջև եղած կապը, որոնք գուցե իրար այլևս չեն տեսնի: Պոեզիա է այն ամենը, ինչ շարժման մեջ է և շարժումն է, որ ծնում է պոեզիա, որը «կյանքի արտահայտությունն է, կամ, ավելի լավ է ասել՝ հենց կյանքն է: Ավելի՛ն՝ պոեզիայի մեջ կյանքն ավելի է կյանք, քան բուն իրականության մեջ» (2. էջ 20):

Հ. Էդոյանի պոեզիայում տիրում է բանաստեղծական տողի անակնկալ և ինքնատիպ շրջադարձը, ինտոնացիայի բացարձակ եզակիությունը, բառի անձեռակերտ թափանցելիությունը: Ինտոնացիայի վերածված բառը կյանքում այն շարժումն է, որով պայմանավորված է կեցության հավիտենականությունը:

Կան բառեր, որոնք բանաստեղծության մեջ չեն գործածվում, սակայն առաջացնում են մտապատկերներ, ենթադրում իմաստներ.

Թեև մենք չենք տեսնում աստղերը ցերեկով,
բայց չէ՞ որ նրանք կան նաև ցերեկվա մեջ:

(«Վերևն ու ներքևը») (3. էջ 762)

Հ. Էդոյանը բառն ազատում է նյութից և թողնում նրան նախաստեղծ վիճակում, կարևորելով նրա զգացմունքահոգեբանական նրբերանգը, գաղափարական նշանակությունն ու փիլիսոփայական ընդհանրացումները: Նրա պոեզիային բնորոշ են նաև խորհրդանշանականացումն ու շարժունությունը: Կարևոր է ոչ թե պատկերի իրեղեն, առարկայական կողմը, այլ նրա մետաֆիզիկական վիճակը, բացարձակ զգայունությունը, պարադոքսալությունը, «մտատեսությամբ եղելության սկիզբը դիտելը» (ընդգծումը տողերիս հեղինակի. - Հ.Ձ.) (7. էջ 56), շարժունությունը, որը հանգեցնում է կատարելության: Սա հոգևոր լույսի շողարձակումն է, բանաստեղծական տեքստի պոտենցիալ վիճակը, մետալեզուն է երևույթների մակարդակում, որը վերածվում է բառերի ուղղակի զգացմունքայնության՝ թաքնված ենթագիտակցականի խորքերում: Մետալեզուն հանդես է գալիս որպես պայման, որն ապահովում է ամբողջական մտքի արտահայտումը՝ ասված խոսքերի սահմաններում: Էդոյանական խոսքը համատեքստային է, որն իր մեջ կրում է հավերժականության ու անսահմանության խորհուրդը: Այն կառուցված է հիերարխիկ սկզբունքով. սպանյութականացված է և վերածված բառ-ինտոնացիայի չարտահայտվածի սահմանագծին, կապված բառային պատենչի հակառակ կողմում գտնվող համատեքստին՝ ազատ տարածությանը: Էդոյանի համար կարևոր է ոչ թե պատկերավորությունը, այլ զգայական-զգացմունքային ապրումների շուրջ ծավալվող խոհը, մտքի ներթափանցումները: Այս յու-

րահատկությունն է նրա լիրիկային հաղորդում հոգեբանափիլիսոփայական բնույթ և նրա մտածողությունն օժտում առանձնահատուկ ոճական ելևէջներով:

«Պոետի լեզվական կառուցվածքը նրա աշխարհի մոդելն է, ազատագրված պատահականություններից և բուրր ավելորդ կողմերից» (4. էջ 272): Էդոյանի ինքնատիպությունը նրանում է, որ կարողանում է ընթերցողին տանել լռության աշխարհը և մասնակիցը դարձնել նրանց խորքերում թաքնված տարերքի արարմանը, որտեղ հնչյունի, խոսքի և իմաստի երրորդության բանաձևում ծնվում է բանաստեղծությունը.

Ճանապարհը հին էր, պայուսակը մաշված,
շենքը հեռու և գորշ,
նստարանի վրա սպիտակ թղթեր էին,
մաքուր, երկար մատներ,
մազերի առատություն,
խոստովանություն,
վերջալույսի մեջ,
շարժում՝ հանուն շարժման:

(«Մակություն») (3. էջ 60)

Հենրիկ Էդոյանի քնարերգական ստեղծագործությունը ավանդույթի, համընդհանրության յուրովի ընկալում է, սրբագործված անմահություն և տիեզերածավալ խորություն, դեպի «Աղօթք հուսատացելոց» ավանդություն, միֆական հնություն և նորօրյա թարմություն: Նրա քնարերգության մեջ լավում է համընդհանուրի ձայնը, զգացվում նախամարդու խոսքի թրթռացող արարչական դողը: Նրա քնարերգական արվեստի հոգեբանական կառուցվածքն էկզոթերիկական տիեզերաբանությունն է, իսկ ուղղորդվելը՝ հնչյունային սկզբնապատճառներից ծնված մտքի հիմքը, հայացք բարձրացնող մեղեդին է և հավատ ներշնչող ճշմարտությունը: Հ. Էդոյանի ցանկացած բանաստեղծություն ինքնադիտարկման, ինքնաճանաչման և սեփական արմատներին անդրադարձնալու փորձ է:

Բանաստեղծի հնչյունային արմատները սերում են տիեզերածավալ լուսակիր այն աղբյուրից, որոնք վերածվելով այլքի կամ մասնիկի, հնչյունային ընկալման միջոցով վերափոխվում են նախամտքի և զգացմունքային նյութի, նրանց էներգետիկական խոստացումները վերածելով ռիթմային-բառային մտքի: Նախաիմաստը նյութականացնելով արարվել են բառեր, որոնք չեն անցել ժամանակի պրիզմայի միջով, չեն պարզեցվել, միանշանակ չեն կապվել փոխաբերության հետ, դրանով իսկ բացառելով ստեղծարար ինտելեկտուալ էներգիայի միջոցով գործադրված ազդեցությունն ու սկզբունքային բացատրելիությունը, թողնելով բառը բաց՝ գոյության նախազգացողությունը գիտակցելու և գերհոգու աղբյուրի հետ հաղորդակցվելու համար: Բառերում Էդոյանը առաջնորդվում է բառարմատով, նա հետևողականորեն վերականգնում է բառերի ներքին ձևը:

Բանաստեղծն է «բնության գաղտնիքների հավատարմատարը, որը տեսնում է երկնի և երկրի, բնության և մարդկային ոգու՝ միմիայն իր համար բացված գաղտնիքները: Բայց երբ նա գտնվում է երկրային սովորական վիճակում՝ նա մարդ է, սովորական մարդ <...>, որը միշտ պատրաստ է արձագանքելու իր հայրենիքից՝

երկնքից իրեն կոչող ձայնին» (2. էջ 29):

Որքան սկիզբն է սուրբ, նույնքան սուրբ է վերջը, որքան Աստծո Խոսքի առաջին բառն է սուրբ, այնքան սուրբ է նաև նրա վերջին բառը:

Դա ուժ է և ոչ նախադասություն:

Ո՞վ է հուշում քեզ քո խոսքն ու լուրջությունը:

Դեմքդ ներքև թեքիր. թե ոչինչ չտեսնես, հենց դա է՝ անհունը:

(«Եվ վերջը, և սկիզբը») (6. էջ 38)

Որքան էլ արտասովոր թվա, միևնույն է, աննկատաբար լիությունը, թաքնախորհուրդ մտքերը, ինչպես և բացարձակամետությունը Հ. Էդոյանի համար դառնում են ստեղծագործելու սկզբունք: Նա գիտակցաբար ձրգտում է վերացականացմանը և բացարձակականացմանը, գիտենալով, որ երևակայությունն անտեսանելիի գոյության արտահայտումն է, ներքին հրաշագործության արդյունքը:

Հենրիկ Էդոյանը չի մշակում բառերը. կարևորելով բառի ինտոնացիան, նրա հուզադաշտը, բանաստեղծական պատկերը հասկանալու համար նրանից ոչ թե ինտելեկտուալ ջանքեր են պահանջվում, այլ սուրբեկտիվ պատկերացումների միջոցով, սեփական «ես»-ի զգացողություններով ընկալելու հնարավորություն: Այստեղից էլ բխում է աննկարագրելիության, կրկնակի շղարշավորման և բառը նյութի կապակցներից ձերբազատելու խնդիրն ու նրա անցումը ինքնահակասությունների սահմաններից այն կողմ, դեպի գիտակցության փակուղիների հաղթահարումը, որտեղ խոսքը վերածում է անցումային խոսքի, քանզի իրականության, հոգևորի՝ ներքին իրականության համար գոյություն չունի խոսքային համարժեքություն: Էդոյանական բանաստեղծական խոսքն անպաճույճ է, անտրոհելի, անշոշափելի ու իրեն չեղ, նաև այստեղ է թաքնված էդոյանական խոսքի ազդեցության գաղտնիքը: Հնչելիս այն վերադառնում է իր սկզբին, նախապատմությանը, նախազաղափարներին և միաձուլվում տիեզերքի հնչյունային էներգիային: Հնչելիս բանաստեղծական խոսքն իրեն դուրս է բերում ինքնամոխիվածության շրջանից, առաջադրում ինքն իրեն, հասնելով ինքնադիմակայման և ճառագման, լույս աշխարհի հանելով մտքի անսպառությունը, թույլ տալով ընթերցողին խորասուզվել դեպի ներս՝ դեպի սեփական ներաշխարհի անվերջությունը, լուսավորելով երևակայության հորիզոնները:

Բառը խոսքի էությունն է, հնչյունը՝ երևույթի: Բանաստեղծության մեջ բանաստեղծի կողմից ներմուծված բառերի ինքնատիպ ներքին իմաստը, խոսքն ու հնչյունները շարունակ փոխներգործում են իրար, արարում նոր իմաստներ: Այսպես ծնվում են բանաստեղծություններ, որոնք միակցում են բանաստեղծի հոգու ներքին աշխարհը արտաքին՝ նյութական աշխարհի հետ և ի ցույց հանում նրա ողջ կյանքն ու բնությունն իրենց մեջ տիրող տրամադրությունների դիտանկյունից: Ստեղծագործական կյանքի վաղ շրջանում Հ. Էդոյանն արդեն մտորում էր բանաստեղծության տիեզերական տարերքի, խոսքի կառուցման ոչ ավանդական սկզբունքի, բանաստեղծական տողի հեռարձակող էներգիայի, բառի լուսարձակության մասին, հայ գրականության պատ-

մական զարգացման շղթայում ազդարարելով նախադեպը չունեցող նոր պոեզիայի ծնունդը.

Կյանքն աղմկում է փողոցում, սակայն խոսքն է խոսք ծնում: Ամեն տեքստ ունի իր նախաստեքստը, և արվեստից է արվեստն առաջանում: Նա ինքն իր ծնունդն է, ինչպես երկնքում մի աստղ է պայթում հանկարծ և մոխիրներից էլնում է մի նոր աստղ, թարմ ու երիտասարդ:

(«Կյանքն աղմկում է») (3. էջ 745)

«Որքան ավելի բարձր է պոետը, այնքան ավելի է նա պատկանում այն հասարակությանը, որի մեջ նա ծնվել է, այնքան նրա զարգացումը, ուղղությունը և նույնիսկ նրա տաղանդի բնույթն ավելի են կապված հասարակության պատմական զարգացման հետ» (2. էջ 39):

Բանաստեղծության մեջ միավորելով հնչյունի, խոսքի և իմաստի երրորդության տարերքը՝ հեղինակը, կարելի է ասել, մերժում է պարտադրված օրենքներն ու ավանդույթները և ամրագրում ժամանակի պարտադրանքով ծնված իր ասելիքը իր ձևով արտահայտելու անհրաժեշտությունը.

Գնալով ավելի դժվար է դառնում պոեզիա գրել կամ ապրել՝ հայացքդ աշման նուրբ շողին կամ ավետարանի բացված էջերին...

(«Գնալով ավելի դժվար է դառնում») (3. էջ 498)

Ստեղծագործական վաղ շրջանից բանաստեղծի առաջնահերթ խնդիրն է դառնում հաղթահարել ժամանակի և տարածության սահմանափակությունը: Նա գիտակցում է, որ խոսքի համար ժամանակի և տարածության միավորներ գոյություն չունեն, և խոսքը՝ տարերքների տարերքը, ազգային պատկանելիություն չի ճանաչում և վերացնում է ամեն տեսակ ազգային սահման, որովհետև.

Սկիզբը բառն էր գործն էր զգացմունքն էր սկիզբը գործն էր բառն էր զգացմունքը սկիզբը զգացմունքն էր բառը գործը սկիզբը անունն էր որ սկիզբ չունեիր սկիզբն ու անունը միասին էին ինչպես աչքերը մարդու-նախքան փակվելը... (5. էջ 122)

Հավատարիմ մնալով իր սկզբունքներին՝ տիեզերական անսահմանության ընկալմանը, արվեստի վերածնող ու լուսավորող ուժին, լեզվազգացողությանը, անձի անհատականությանն ու եզակիությանը, չտրվելով այս կամ այն գրական հոսանքներին, ընդունելով ամեն տեսակի մարտահրավերներ, Հենրիկ Էդոյանը չփնտրեց, այլ գտավ իր ուղին (« «Ես չեմ փնտրում, ես գտնում եմ»-ասել է ոչ այլ ոք, քան Պիկասոն») (8. էջ 237).

Ես գնում եմ Ժամանակի և Բախտի առջևից, նրանք սնվում են իմ թողած հասկերով, իմ արյան կաթիլներով, որոնք ընկնում են ինչպես հանգած աստղեր,

ես ավելի վերև եմ բարձրացող և ընկնող աստղերից...

(«Երկու շարժում, Երեկո») (3. էջ 188)

Բառն ինքնին նյութական չէ, բառի մեջ կատարյալը մարմնավորելով և գիտակցելով «մեծությունը խոսքի» (3. էջ 30), պոետը տեսողական և լսողական նախահիշողության միջոցով բացահայտում է երևույթի նախիմաստը՝ նրա սկզբնական, նախաստեղծ էությունը: Հ. Էդոյանն ասված խոսքի սահմաններում բառին ազատություն է տալիս դարձնելով այն ինքնաբավ իրականություն, որոնք բառերի աստղաբույլի մեջ հարստանում են առանձնահատուկ իմաստներով: Նախընտրելի կետադրական նշանների կամ նրանց բացակայության էդոյանական խաղը, ինտոնացիայի և բառային կարող շրջադարձերը, անակնկալ տողադարձերը ընթերցողին տանում են բառի, խոսքի, հնչյունի, մտքի բանաստեղծական իշխանություն.

Դու հենման կետ ես փնտրում,
բայց նավի վրա ես դու,
իսկ նավը՝ ջրի վրա,
իսկ ջուրը՝ երկրի,
որը սլանում է մոլեգին վազքով
տիեզերքի սուկալի
ամայության մեջ:

(«Հենման կետ») (3. էջ 709)

Հ. Էդոյանի պոեզիայում բառն իր ինքնաբավ հարմոնիկ ձայնային արտահայտությամբ ունի կարևոր նշանակություն: Նրա պոեզիայում բառերը կապակցվում են մտքի ձայնի շարադրանքով, իրենց մեղեդային հանգույցով և այդ հանգույցը, մտքի տոնայնությունը, հնչյունի ինտոնացիան, գույնն ու երանգը մշտապես ներդաշնակված են: Պոետը բանաստեղծական ասելիքը կարող է մատուցել ցանկացած ռիթմով և տոնայնությամբ, որոնց ձևն ու բովանդակությունը մշտապես համահունչ են:

Էդոյանական բառն ինքն է ստեղծում իր իրականությունը: Յուրաքանչյուր բառ, ունենալով սեփական հրնչյունական համակարգ, իր ներքին բովանդակությամբ նախադասության մեջ համադրվում է այլ բառերի հետ հնչյունային ներդաշնակության և փոխանցվող մտքի կապի միջոցով, որոնց շնորհիվ դրանք կերպարանք են ստանում ճիշտ այնպես, ինչպես երաժշտական միտքն է կերպարանավորվում հնչյունների շնորհիվ: Հ. Էդոյանի թաքնախորհուրդ բանաստեղծական աշխարհում մեծ է ճիշտ և ներդաշնակ կառուցված խոսքի անտեսանելի ազդեցությունը: Բանաստեղծության ներքին բովանդակությունը մշտապես համահունչ է ներքին ձևին: Ռիթմի պահպանման անհրաժեշտության պատճառով էդոյանական խոսքերը կարող են լինել կարճ ու ընդհատված, սակայն այստեղ ազդեցության ուժն արտաքին տեսքի մեջ չէ, այլ խոսքի և ռիթմի ներամիտի էության մեջ:

Աշխարհագրորդության տիեզերականությանը օժտված բանաստեղծի պոեզիան ընթերցելիս «օրվա մետաղների աղմուկների միջից», «իմչպես հիշողություն» (3. էջ 17) հնչում է երգեհոնի աստվածային հոգեպարար մեղեդին և ակամա տեղափոխվում են վերերկրային այն ոլորտը, որտեղ բնակվում են զուլալ հոգիները, որտեղ պոեզիան ու երաժշտությունը միաձուլվում են իրար և կազմում մեկ ամբողջություն, այն է՝ ներդաշնակություն: Այստեղ, այս ոլորտում են բնակվում ընտրյալների հոգիները, որոնք խոսում են մեկ՝

համընդհանուր լեզվով: Այս տեսակետից թվում է, թե Հենրիկ Էդոյան բանաստեղծի և հանճարեղ կոմպոզիտոր Յոհան Սերաստիան Բախի երկնային մտքերը բնակվել են նույն տարածության ու ժամանակի մեջ, սնվել տիեզերքի միևնույն աղբյուրից և խորհել միևնույն մտքի շուրջ: Երևի հենց այդ է պատճառը, որ Հենրիկ Էդոյանն ու Բախը գտնվում են միևնույն լսողական ուղու վրա: Այդ երբեմնի մտային կապի երկրային հաստատումը մենք զգում ենք ոչ միայն պոետի պոեզիայի մեղեդու հետ առնչվելիս, այլ նաև հենց նրան՝ Բախ հանճարին նվիրված բանաստեղծություններն ընթերցելիս՝ «Յ. Ս. Բախ» (3. էջ 70), «Միտ շարժումը» (3. էջ 328):

Մեղեդին թելադրում է պատկերը, իսկ ինտոնացիան մարմնավորում է այն և ծնվում է բանաստեղծությունը, որի իմաստը կյանքի հավերժական ընթացքն է: Հնչյունի և բառի միասնության մեջ արտահայտված ինտոնացիան առավել ընկալելի է դարձնում բանաստեղծության համամարդկային բովանդակությունը, ունկնդիրը դարձնում բանաստեղծի համամարդկային լեզվին: Բանաստեղծական խոսքի մեջ ամփոփված ինտոնացիան, ներդաշնակվելով բառին, արարում են իմաստներ, որոնք մարմնավորում են բանաստեղծությունը: Սա է ձայնի, բառի, իմաստի երրորդության այն բարձրակետը, որտեղից հնչում է բանաստեղծի ձայնը՝ որպես նորօրյա աղոթք: Սա է էդոյանական հեղինակային ասելիքի ամբողջ զաղանիքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս. Ս., Հենրիկ Էդոյան, «Խոսքն իմ հենարանն է» և «Այդ անշարժ վայրկյանն եմ ես», //Գրականագիտական հանդես ԺԷ, Եր., Արմավ, 2017 թ. Abrahamyan S. S., Henrik Edoyan, “Khosqn im henarann e ev” Ayd ansharj vayrkyann em es”, //Grakanagitakan handes ZhE, Yer., Arnav, 2017 th.
2. Բելինսկի Վ. Գ., Չերնիշևսկի Ն. Գ., Դոբրոլյուբով Ն. Ա., Բնտիր էջեր, Եր., Սովետական գրող, 1980 թ. Belinski V. G., Chernyshevsky N. G., Dobrolyubov N. A., Yntir ejer, Yer., Sovetakan grough, 1980 th.
3. Էդոյան Հ. Ա., Բնտրանի, Եր., Հայագիտակ Գիր, 2016 թ.: Edoyan H. A., Yntrani, Yer., Hayagitak Gir, 2016 th.
4. Էդոյան Հ. Ա., Ծարժում դեպի հավասարակշռություն, Եր., Ս. Խաչենց, 2009 թ.: Edoyan H. A., Sharzhum depi havasarakshruthyun, Yer., S. Khachentz, 2009 th.
5. Էդոյան Հ. Ա., Պատկեր և կետ, Եր., 1980 թ.: Edoyan H. A., Patker ev kesor, Yer., 1980 th.
6. Էդոյան Հ. Ա., Լույսը ձախ կողմից, Եր., Ջանգակ, 2018 թ.: Edoyan H. A., Luys’y dzakh koghmizt, Yer., Zangak, 2018 th.
7. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, ԲԱՆ ԺԱ, Եր., Ջանգակ 2013 թ.: Grigor Narekatzi, Matyan voghberguthyan, Tagher, BAN ZhA, Yer., Zangak, 2013 th.
8. Սևակ Պ. Ռ., Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր երրորդ, Եր., Սովետական գրող, 1983 թ.: Sevak P. R., Yerkeri zhoghovatzu 3 hator, hator 3-rd, Yer., Sovetakan grough, 1983 th.
9. Martun Israelyan, Book of sonnets for soprano and chamber orchestra (1980) //https://www.youtube.com/watch?v= uWY94 FITIFU&fbclid=IwAR3C-e8OJ5V2k21qoAVAm1vRPwdA_9uimh_fllWnT1xJEFqWeydFyk10aA
10. Рухляк М. А., Внутренний голос народа. О молодых ком-

позиторах, вступающих в жизнь R'uxhyan M. A.,
Vnutrenniy golos naroda. O molodix kompozitorax,
vstupayush'ix v zh'izn'./
http://www.golosarmenii.am/article/55728/vnutrennij-golos nar-

oda? fbcid=IwAR1Fg FrBm
88X5DRw46H8NLHmUWladPEB55PczzRnjJSRT2tLfaoad
KPWFw

Բանալի-բաներ. հնչյուն, խոսք, ձայն, պոեզիա, լուրջություն, մեղեդի, ռիթմ, իմաստ, ինտոնացիա, Հենրիկ Էդոյան, Հռիփսիմե Չաքարյան:

Ключевые слова: звук, речь, голос, поэзия, тишина, мелодия, ритм, смысл, интонация, Генрих Эдоян, Рипсиме Закарян.

Keywords: Sound, word, voice, poetry, silence, melody, rhythm, meaning, intonation, Henrik Edoyan, Hripsime Zakaryan.

Տեղեկություններ հեղինակի մասին. ՉԱԲԱՐՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ ԱՐԱՅԻ (ծ. 12. 06. 1986թ. Սյունիքի մարզ քաղաք Գորիս): Ավարտել է Գորիսի պետական համալսարանի մանկավարժական հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը՝ ստանալով մանկավարժության բակալավրի աստիճան՝ հայոց լեզու և գրականություն մասնագիտացմամբ (2008 թ.): Ավարտական աշխատանքի թեման է՝ «Հայոց լեզու» առարկայից «Կրավորական սեռը հայերենում» (ղեկավար՝ Վ. Մնացականյան): Կրթությունը շարունակել է՝ նույն մասնագիտությամբ, ստանալով մագիստրոսի աստիճան (2012 թ.), մագիստրոսական թեզ՝ «Գրականություն» ճյուղից «Շարլ Ազնավուրը բանաստեղծ» թեմայով (ղեկավար ք. գ. ք., դոցենտ Թ. Մարտյան): 2018-ից Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության ամբիոնի հայցողող է, ատենախոսության թեման է՝ «Ավանդույթի և նորարարության խնդիրները Հենրիկ Էդոյանի պոեզիայում» (գիտական ղեկավար՝ ք. գ. դ., պրոֆեսոր Կիմ Աղաբեկյան): 2013-ից առ այսօր աշխատում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում (Գորիսի մասնաճյուղ)՝ որպես դասախոս: Մենագրության հեղինակ է (Հ. Ա. Չաքարյան, Շարլ Ազնավուր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գի-տություն», 2016 թ.):

Сведения об авторе: ЗАКАРЯН РИПСИМЕ АРАЕВНА (род. 12. 06. 1986, г. Горис, Сюникская область) Окончила отдел армянского языка и литературы педагогического факультета гуманитарных специальностей Горийского государственного университета, получив степень бакалавра педагогики армянского языка и литературы (2008). Дипломная работа по предмету “Армянский язык” на тему “Пассивный залог в армянском языке” (с отличием, руководитель В. Мнацаканян). Продолжила учебу на том же факультете, получив степень магистра (2012). Магистерская диссертация по предмету “Литература” на тему “Шарль Азнавур - поэт” (с отличием, руководитель к.ф.н., доцент Т. Марутян). С 2018 года является соискателем факультета армянской филологии кафедры новейшей армянской литературы Ереванского государственного университета, тема диссертации “Проблемы традиции и новаторства в поэзии Генриха Эдояна” (научный руководитель доктор филологических наук профессор Ким Агабекян). С 2013 года до сих пор работает преподавателем Ереванского государственного института театра и кино (Горисский филиал). Является автором монографии “Шарль Азнавур”, Ер.: Гитутюн., 2016.

Information about the author: ZAKARYAN HRIPSIME ARA (born on 12. 06. 1986 in Syunik region c. Goris)She graduated from the Department of Armenian Language and Literature at the Faculty of Pedagogical Humanities in Goris State University, got a Bachelor's degree in Pedagogy Armenian Language and Literature (2008 th.). Author of final paper from “Armenian language” subject on “Passive voice in Armenian” and passed oral defense with 5/100 score /excellent (Supervisor V. Mnacakanyan). She continued her education at the same faculty, and got a master's degree same profession (2012 th.). Author of master thesis from “Literature” subject on “Charles Aznavour as a poet” and passed oral defense with 5/95 score (excellent) (under the supervision of Candidate of Philology, Associate Professor T. Marutyan). From 2018 she is a Candidate of the Department of Armenian Literature at the Faculty of Armenian Philology at Yerevan State University, the topic of the thesis is “Issues of tradition and innovation in Henrik Edoyan’s poetry” (Scholar Supervisor Candidate of Philology, Professor Kim Aghabekyan). Since 2013 up to present she is a lecturer at Yerevan State Institute of Theater and Cinematography (The Institute in Goris). She is an author of a monograph (H., A., Zakaryan, Charlez Aznavour, Yer., NAN RA «Gitutyun» pub., 2016 th.).

Րեզյումե

Соискатель факультета Армянской филологии кафедры Новейшей армянской литературы Ереванского государственного университета Рипсиме Араевна Закарян. – “Мелодия речи в стихотворном мире Генриха Эдо-яна”.

Цель данной статьи – показать, как можно постичь мир и человека посредством проникновения в поэтическое наследие Генриха Эдояна – в поэтическую формулу троичности произнесенного звука, речи и смысла. Вслушиваясь в интонационно-смысловые свойства слова, Генрих Эдоян раскрыл и выявил исключительные возможности и применяя их в своих поэтических рядах и поэтической энергии, подтвердил наличие стихов в них.

Summary

Candidate of the Department of Armenian Literature at the Faculty of Armenian Philology at Yerevan State University Hripsime Ara Zakaryan. - “Word music in the poetic world of Henrik Edoyan”.

The aim of this article is to show how to discover the world and the person through the penetration into Henrik Edoyan's poetic heritage expressed in the poetic formula of the sound, word and meaning trinity. Listener of the intonational-semantic nature of speech-Henrik Edoyan revealed exclusive opportunities in them and applying them confirmed their elements in his poetic series and poetic energy.